ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՅԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Թունիսի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով առավել զարգացնել և ամրապնդել երկու պետությունների միջև արդեն իսկ առկա բարեկամական հարաբերությունները,

ցանկանալով դյուրացնել երկու պետությունների՝ դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց ուղևորությունների ընթացակարգերը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Յուրաքանչյուր Կողմի պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիները ազատվում են մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու նպատակով վիզա ձեռք բերելու պարտականությունից՝ տարանցման կամ առաջին մուտքի օրվանից 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում 90 (իննսուն) օրը չգերազանցող ժամկետով այնտեղ մնալու համար:

2. Յուրաքանչյուր Կողմի պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածք մուտք են գործում միջազգային երթևեկության համար նախատեսված ցանկացած սահմանային անցակետով:

Հոդված 2

Յուրաքանչյուր Կողմի պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիները, որոնք հավատարմագրված են մյուս Կողմի պետության տարածքում դիվանագիտական կամ հյուպատոսական գործառույթներ

իրականացնելու համար, ինչպես նաև նրանց հետ համատեղ բնակվող՝ վերջիններիս ընտանիքների անդամները, պետք է ընդունող Կողմի պետության տարածք մուտք գործելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում, անցնեն հաշվառման անհրաժեշտ ընթացակարգերը:

Հոդված 3

Յուրաքանչյուր Կողմի պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիները, որոնք նպատակ ունեն մյուս Կողմի պետության տարածքում մնալու 90 (իննսուն) օրը գերազանցող ժամկետով, պետք է ստանան մուտքի վիզա՝ ընդունող Կողմի պետության ներպետական օրենսդրության համապատասխան:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի մերժելու մյուս Կողմի պետության այն քաղաքացիների մուտքն իր պետության տարածք, որոնց համարում է ոչ ցանկալի անձ, կամ՝ կրճատելու այդ քաղաքացիների՝ իր պետության տարածքում մնալու ժամկետը՝ առանց նշելու այդպիսի որոշման պատճառները:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող այն քաղաքացիները, որոնք մուտք են գործում մյուս Կողմի պետության տարածք սույն Համաձայնագրին համապատասխան, այդ պետության տարածքում գտնվելու ընթացքում պետք է ենթարկվեն այդ պետության ներպետական օրենսդրությանը:

2. Եթե որևէ Կողմի պետության՝ վավեր դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում կորցնում են իրենց անձնագիրը, ապա վերջիններս տեղեկացնում են այդ Կողմի պետության իրավասու մարմիններին՝ համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար: Իրավասու դիվանագիտական առաքելությունը կամ հյուպատոսությունն իր

քաղաքացուն տրամադրում է նոր դիվանագիտական անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ և այդ մասին տեղեկացնում ընդունող պետության իրավասու մարմիններին:

Հոդված 6

1. Կողմերը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ դիվանագիտական ուղիներով փոխանակում են իրենց վավեր դիվանագիտական անձնագրերի նմուշները:

2. Նոր դիվանագիտական անձնագրեր տրամադրելու կամ գործող անձնագրերում փոփոխություններ կատարելու դեպքում Կողմերից յուրաքանչյուրը նոր անձնագրերը կամ դրանց փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է մյուս Կողմին՝ տրամադրելով նոր կամ փոփոխված անձնագրերի նմուշները:

Հոդված 7

Կողմերի միջև սույն Համաձայնագրի կատարման վերաբերյալ ցանկացած վեճ լուծվում է դիվանագիտական ուղիներով՝ բարեկամական կարգավորման միջոցով:

Հոդված 8

Սույն Համաձայնագրում փոփոխություններ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որոնք կատարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 9

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից 60 (վաթսուն) օր հետո, որով Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է մյուս Կողմին սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին իրավական ընթացակարգերն

ավարտված լինելու մասին:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հերթական 5 (հինգ) տարի ժամկետներով, եթե Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր չի ծանուցում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին դադարեցման օրվանից առնվազն 6 (վեց) ամիս առաջ:

Կատարված է Երևան քաղաքում 2023թ. դեկտեմբերի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ԹՈՒՆԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**
ՎԱՀԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ	**ՄՈՒՆԻՐ ԲԵՆ ՌՋԻԲԱ**
Արտաքին գործերի նախարարի տեղակալ	**Արտաքին գործերի, միգրացիայի և արտերկրում թունիսցիների հարցերով պետքարտուղար**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի դեկտեմբերի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Նելլի Սարոյան